ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 հունիսի 2016 թվականի N 156-Ա

ՀԱՆՔԱՎԱՆԻ ՄԻՋՁԱՄԲԱՐԱՅԻՆ ՄԵԿՈՒՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԱՄՌԱՆ ԱՄԻՍՆԵՐԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.17-րդ կետի <<ա>> ենթակետի, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2016 թվականի մայիսի 30-ի N 444-Ա որոշման 4-րդ կետի՝ **որոշում եմ.**

1. 2016 թվականի ամռան ամիսներին Հանրավանում գործող առողջարարական ճամբարներում հանգստացող երեխաների շուրջօրյա անխափան և որակյալ բժշկական օգնություն և սպասարկում կազմակերպելու նպատակով հանձնարարել՝

1) <<Հրազդանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ մեկուսարանի շուրջօրյա աշխատանքները իրականացնելու նպատակով ժամանակավորապես տրամադրել *ԳԱԶԵԼ 199 SL 42* պետական համարանիշի ավտոմերենան, որի շուրջօրյա անխափան աշխատանքների իրականացման համար ապահովել վառելիքով:

2) <<Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ 2016 թվականի հունիսի 20-ից հուլիսի 9-ը ներառյալ, <<Չարենցավանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ 2016 թվականի հուլիսի 9-ից հուլիսի 28-ը ներառյալ, <<Նաիրիի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ 2016 թվականի հուլիսի 28-ից օգոստոսի 16-ը ներառյալ Հանրավանի մեկուսարանում աշխատելու նպատակով գործուղել ընկերությունների համապատասխան աշխատողներին, գործուղման ծախսերը վճարել Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան՝ ապահովելով Հանրավանի <<*Զեփյուռ*>> ճամբարի տարածքում գտնվող մեկուսարանը առաջնային բժշկական օգնության անհրաժեշտ դեղորայքով և բժշկական պարագաներով:

3) Սույն որոշման կատարման պատասխանատվությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի վրա:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2016 թվականի հունիսի 06
ք. Հրազդան